Կոմիտաս

Մարգարիտ Բաբայանին 1913, 7 օգոստոսի, Ս. Էջմիածին.

Որքա՛ն ուրախ եւ հպա՛րտ եմ հայի ստեղծագործութեան գնահատումը լսելով: Մենք շատոնց մտքի եւ սրտի զէնքն Էինք բռնելու եւ ոչ թէ փայտի ու մետաղի, որոնք հզօրագոյնի հզօրագո՛յն հարուածով մէկէն ջախջախուեցան. բայց մեր մտքի ու սրտի զէնքն ա՛յնքան թափանցիկ, ա՛յնքան կենսունակ է, որ օտար մտքերն ու սրտերը՝ ուզե՛ն-չուզե՛ն պիտի գերերն. ահա՛, ա՛յս է կենդանի զէնքը, որի զինուորն եմ ե՛ւ ես, ե՛ւ դու, ե՛ւ բոլոր նոքա, որոնք իրենց ցեղի ազնիւ միտքն ու սիրտն են հրապարակ հանում եւ այնո՛ւ շարժում սառն քաղաքագէտի պաղ սիրտը՝ մի փոքր էլ մեր կենսունակ եւ մարդկութեան պիտանի ժողովրդին ու ազգին նայելու, խնայելու եւ նորա մասին մտածելու: